ՑԱՒԵԼՈՒԱԾ Ա. 96.
Բ. Գրքի եր. 67.
ԳԵՂԱՐԴ

Հարաւային պատին դրսից դէպի աջ.

1. Կամաւն Այ ես Խորինչահ (s!) ամու
2. սին Զաքարեի տն Թեղան մխայ
3. բանեցայ սբ ուխտիս Այրիվանից
4. տվաք Բ: սկիք Ա: բուռվառ Ա: կանթ
5. եղ արծաթի եւ այդ արդունք (s!) սպա
6. սաւորքս խոստացան ի տարոջն Դ:
7. [աւր ժամ Բ: Զաքարեի Բ: Խորիչահի]

ԾԱՆՕԹ.— Փակագծի մէջ առնուածը առանձին քարի վերայ եւ բուն արձանագրութիւնից հեռու ամրացրած նորոգութեան ժամանակ: Ընդհանրապէս պատի այս մասի քարերը տեղահան են եղած, երեւի, երկրաշարժի ժամանակ եւ ամրացրած է ոչ իրենց տեղերում, ինչպէս Իւանէ աթաբակի արձանագրութիւնն է (Ցաւելուած Ա. 1.) եւ ուրիշները, որ նշանակում ենք Ա. 89–90 համարի տակ:

Թոդան կամ Թեոդան անունով մի վայր գտնւում է Արցախում աւերակների եւ արձանագրութիւնների մնացորդներով. արդեօ՞ք արձանագրութեան մէջ յիշուած Թեղանը նո՞յն է այս վայրի հետ. տ. Ջալ. Ա. 210: Բարխուդարեան. Արցախ. 252:

ՑԱՒԵԼՈՒԱԾ Ա. 97.
Բ. Գրքի եր. 68.
ԳԵՂԱՐԴ

Հարաւային պատին, բարձր.

ա) ...եցի եւոու: Կ: դահեկան ի սբ կաթողիկէս եւ սպասաւորք սորա խոստացան... ինձ եւ: Ե: աւր

բ) ...Մամերին այգոյն: Գ: աւր իւրն: Ա: աւր Հազարդեղին եւ: Ա: աւր Աղունեկան:

գ) Աջ խորշի մէջ երկու առանձին բարի վերայ, արձանագրութեան մնացորդներ.

1. այ...Հասանա եղէ միաբան... եւ եւոու: Բ: մասն ոսկ/զաւծ եւ այլ ընծայք եւ/ ... սահմանեցին...»: (Այս բարը թարս դրուած):
2. Ես Շողայկաթ ե./.. ուսբս: Ի: դահե.../ ուն: Ա: աւր ժամ

դ) 1. Ես Խաչիկ սնեալ ի սբ Ա(ծա)/ծինս էոու: Խ: դհ եւ այդի վանական եցբա?/
2. Նի զԳրիգորոյ եւ եւ...?

Քարի աջ կողմը կտրուած է: Վերջի տողը գուցէ ուրիշ արձանագրութեան մնացորդ լինի:

ՑԱՒԵԼՈՒԱԾ Ա. 98.
Բ. Գրքի եր. 67. պատկ. 139.
ԳԵՂԱՐԴ

Արեւելեան պատին խորշից դէպի հիւսիս՝ Աբրահամի եւ Պետրոսի (Ցաւելք. Ա. 71. եւ 72.) արձանագրութիւնների տակ. որոնք շինութեան ժամանակից են:

1. Ես Խաչատուրս զիմ այդին...ն եւոու ի սբ եղբայրանոցս եւ սոքա փոխարէն հատուցին ինձ ի տարին: Բ: աւր ժամ: Ա: աւր ինձ: Ա: իմ ծնողացն որ խափանէ դատի:
2. Քիչ ներքեւ՝
Ես Ստեփանոս եւոու ի սբ կաթողիկէս: Խ: դահեկան եւ սպասաւորք սորա խոստացան ի տար/ին: Բ: աւր ժամ: Ա: ինձ: Ա: Պետրոսի եղբաւրն իմո(ւ)մ?
3. Անմիջապէս սորա տակը կից՝ ուրեմն ժամանակակից նախընթացին.
Ես Համազասպ եւոու ի սբ եկեղեցիս: Խ: դահեկան եւ սպասաւորքն եւոուն ի տարին: Բ: աւր ժամ ինձ:
4. Սրա տակը, մի բարի վերայ եւ նոյն գրով հետեւեալ փոքրիկ արձանագրութիւնները.
   1. Կամակցութիւ ամենայն եղբարցս հաստատ
   2. Եցաք ի տարոջն: Բ: աւր ժամ Բախտոս դարբնին:
   † աւր: Ա: ժամ Գրամկանն: աւր: Ա: Շատէրոյն:

ՑԱՒԵԼՈՒԱԾ Ա. 99.
Բ. Գրքի եր. 69. պատկ. 139.
ԳԵՂԱՐԴ

1.† Ես Վարդաշահ եւոու ի սբ եկեղեցիս: Ծ: դեհեկան եւ պարգեւեցին ինձ: Բ: ժամ: Ա: աւրն Սամատին? (թէ Սամարին. փակագիր է):

2. †Դեղս Զուռենց ստացա: Բ: աւր ժամ. մին ինձ: Ա: Շահկանն: Բ:/ աւր Զունտին. Ա: աւր Զուրջին: Ա: աւր Ո... (փչացած մինչեւ նիշը) ին:

ԾԱՆՕԹ.— Դեղի արձանագրութեան մէջ երկրորդ տողում ընդգծուածները տարբեր գրով, իսկ Զունտին» տարբեր է եւ սրանցից. ուրեմն նորոգութեան ժամա-